
**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏԵՍԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ**

ԱՇՈՏ ԱԲՐԱՅԱՍՅԱՆ

Ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ընդգրկումն և բազմաբնույթ գործունեության մեջ բացառիկ մեծ արժեք ունեն ընդհանուր լեզվաբանության ոլորտին վերաբերող նրա հրապարակումները: Այդ աշխատությունների քիչ թե շատ ամբողջական համապատկերը մի քանի էջում ներկայացնելու և արժևորելու փորձն իսկ անխոհեմ նախաձեռնություն կլիներ. դա կարող է միայն մեծածավալ ուսումնասիրության նյութ դառնալ: Այդ պատճառով այստեղ ստիպված ենք սահմանափակվել միայն երկու մասնավոր հարց ամենաընդհանուր ձևով ուրվագծելով: Այդ երկու փոխշաղկապված հարցերից մեկը հայ տեսական լեզվաբանական մտքի առաջխաղացմանը Է. Աղայանի բերած նպաստն է, մյուսը՝ նրա աշխատությունների դերը ընդհանուր լեզվաբանության ուսուցման գործում: Այս հարցերը, սակայն, «մասնավոր» կարող են թվալ սոսկ առերևույթ, այն էլ թերևս միայն Է. Աղայանի գործունեության անսահմանորեն լայն շրջանակների համեմատությամբ: Բայց դրանցից յուրաքանչյուրի մեջ էլ բազում նրբերանգներ ու արդեն իրոք մասնավոր ենթահարցեր կան, որ ստիպում են խոստովանել՝ դրանք էլ սոսկ հատվածաբար են ներկայացվելու այն հույսով, որ այդ հատվածների համակցումից գոնե ինչ-որ չափով կուրվագծվի այն պատկերը, որը կստեղծվեր, եթե վերլուծությունների խճանկարն ամբողջական լիներ:

Տեսական լեզվաբանության դասավանդման մեջ Է. Աղայանի ներդրումն առաջին հերթին այն դասախոսություններն են, որ ավելի քան հինգ տասնամյակի ընթացքում նա կարդացել է հազարավոր ուսանողների համար, որոնցից մեկն էլ տողերիս հեղինակն է: Առաջին հերթին՝ հենց դրանք, քանի որ անմիջական շփումը, հնչող խոսքը շատ ավելի խոր ու անջնջելի ազդեցություն են ունենում, քան գրքի ընթերցումը: Էդուարդ Աղայան դասախոսի հետ այդ անմիջական շփման բախտն ունեցել են նրանք, ովքեր ուսանել են համալսարանում մինչև 1990-ական թվականների սկիզբը:

Սակայն գիտելիքը նաև պիտի պահպանվի, պիտի մատչելի լինի ցանկացած պահի: Սա վերաբերում է անգամ Է. Աղայանի դասավանդած տարիների ուսանողներին, առավել ևս սա վերաբերում է հաջորդ սերունդներին: Այս գիտակցությամբ և այս մտահոգությամբ է ստեղծվել «Լեզվաբանության ներածություն»-«Լեզվաբանության հիմունքներ» դասագիրքը, որի՝ հաջորդական վերանշակումներով հրատարակությունները ուղիղ 40 տարի տևած երկու զուգահեռ ընթացքներ են ներկայացնում՝ քաղաքականացված երկրում պարտադրվող քաղաքականացված գիտության աստիճանական ասպարաղաքականացման 40 տարվա ընթացք և Է. Աղայանի

ստեղծած դասագրքի՝ քաղաքական-գաղափարախոսական կեղևածածկույթից աստիճանական ազատագրման (անգամ շապիկի գույնի գուցե և պատահական, սակայն, այնուամենայնիվ, խորհրդանշական փոփոխությամբ) և գիտական ընդլայնման ու խորացման 40 տարվա ընթացք: Այդ ընթացքի ամփոփումները եղան ոչ միայն հանրապետական, այլև համահիւստեանական դասագրքի որակավորում ստացած «Լեզվաբանության ներածություն»-ը¹, նաև ընդհանուր լեզվաբանության դասընթացի համար նախատեսված «Լեզվաբանության հիմունքներ»-ը²:

Դժվար թե կարելի լինի ընդհանուր լեզվաբանության ուսուցման մեջ Է. Աղայանի ներդրումը հանգեցնել միայն դասագրքին. այդպիսի սահմանափակումը խիստ հարաբերական կլինի, ինչպես որ հարաբերական էին վերն արված սահմանազատումները: Ինչպես որ գոնե Է. Աղայանի դեպքում սոսկ հարաբերականորեն անջատ կարելի է պատկերացնել տեսական գիտությունը և նրա գործնական ուսուցումը, ինչպես որ սոսկ հարաբերականորեն անջատ կարելի է պատկերացնել գործնական ուսուցումը և դրա տեսական արտացոլումը դասագրքում, այնպես էլ հարաբերական սահման կարելի է գծել դասագրքի և հեղինակի մի շարք այլ աշխատությունների միջև: Ասվածը նախ և առաջ վերաբերում է առաջին տպավորությամբ առավելապես հայերենագիտական վերնագրեր ունեցող «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (1967) և «Ընդհանուր և հայկական բառագիտություն» (1984) գրքերին, որոնք միաժամանակ նաև արժեքավոր ձեռնարկներ են, մեկը՝ կառուցվածքային լեզվաբանության, մյուսը՝ ընդհանուր բառագիտության դասավանդման համար:

Է. Աղայանի ընդհանուր լեզվաբանական հայացքները և նրանց ինքնատիպությունը այստեղ, ինչպես արդեն ասվեց, ամբողջությամբ ներկայացնելու հավակնություն չունենալով՝ ուզում ենք անդրադառնալ որոշ հարցերի Է. Աղայանի տված լուծումներին: Թեմատիկ ընդհանրություն չունենալով հանդերձ՝ դրանք ունեն, ինչպես կարելի կլինի տեսնել, մեթոդաբանական, գաղափարական ընդհանուր հենք:

Է. Աղայանն իր ուրույն հնչույթաբանական տեսությունը զարգացնում է «Լեզվաբանության հիմունքներ»-ի՝ հնչույթաբանության էությանն ու հիմնական հասկացություններին նվիրված ընդարձակ ենթագլխում:

Խոսքի գործընթացում և լեզվական համակարգում հնչական միավորների դրսևորումները դիտարկելով՝ Է. Աղայանը նախ անհրաժեշտ է համարում տարբերակել *հնչուրդը* և *հնչյունը*: Ըստ նրա՝ առաջինը լեզվական ընդհանուրն է, երկրորդը՝ խոսքային մասնավորը, եզակին, առանձնակին: «... **Չնչուրդը կենդանի խոսքում արտասանված յուրաքանչյուր հնչյունի իրական դրսևորումն է**»³ (այստեղ և ստորև ընդգծումները հեղինակինն են – Ա. Ա.): Է. Աղայանը նշում է, որ յուրաքանչյուր այդպիսի դրսևորում ունի իր առանձնահատկությունները, որոնցով տարբերվում է նույն հնչյունի մյուս դրսևորումներից, և միաժամանակ պահպանում է այն հիմնական, էական արտասանական ու ձայնային հատկանիշները, որոն-

¹ Տե՛ս **Агаян Э. Б.** Введение в языкознание. Ер., 1960, **Է. Աղայան**, Լեզվաբանության ներածություն, Եր., 1967:

² Տե՛ս **Է. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:

³ Նույն տեղում, էջ 237:

ցով այն համընկնում է իրեն զուգահեռ մյուս դրսևորումներին: Ինչ վերաբերում է հնչյունին, ապա այն հնչուրդների ընդհանուր և էական հատկանիշներն արտացոլող պատկերացումն է: «Յնչյունները, այս տեսակետից, դառնում են լեզվի, որպես հաղորդակցման միջոցի կենտրոնական նյութական միավորները... Իբրև ընդհանուր, որպես առանձին հնչուրդների ընդհանրություն, հնչյունն անհրաժեշտորեն և պարտադիր կերպով գոյություն ունի տվյալ հանրության յուրաքանչյուր անդամի մեջ հավասարապես: **Յնչյունն, այսպիսով, լեզվական միավոր է**»⁴:

Այսքանով սահմանափակվելու դեպքում է. Աղայանի տեսակետն ընդամենը ընդհանուր տարածում ունեցող մոտեցման կրկնությունը կլիներ՝ տերմինային փոփոխությամբ՝ հնչույթ – հնչյուն, հնչյուն – հնչուրդ: Սակայն է. Աղայանը, այս երկուսից բացի, տարբերակում է հարաբերության երրորդ եզրը՝ հնչույթը: Նա այդ անում է՝ հստակ գիտակցելով, որ միայն այդ դեպքում կարող է հարթվել հնչույթաբանության կնճռոտ խնդիրը. «Ժամանակակից լեզվաբանության մեջ... հնչույթը համարում են լեզվի կառուցվածքի վերացական միավոր, իսկ հնչյունը՝ խոսքի մեջ արտասանվող նյութական միավոր: Դրանով ըստ էության բաց է մնում լեզվի այն իրական, ընդհանուր միավորը, որը կարևորագույնն է հաղորդակցման համար... մենք որդեգրեցինք արտասանվող միավորի և դրա հոգեբանական պատկերացման տեսությունը և առաջինը կոչելով **հնչուրդ**, երկրորդը կոչեցինք **հնչյուն**, այսինքն այն, ինչ որ Բոդուեն դե Կուրտենեն կոչել էր **հնչույթ** տերմինով»⁵: է. Աղայանի համոզմամբ՝ ո՛չ հնչուրդները, ո՛չ հնչյունները պատրանք չեն, ինչպես երբեմն ասվում է հնչույթի մասին: Մինչդեռ հնչույթը լեզվաբանական վերլուծությամբ է բացահայտվում. «... **հնչույթը լեզվական կառուցվածքի վերացարկված միավոր է իմաստազատիչ հակադրությունների համակարգում**»⁶:

Ինչպես կարելի է տեսնել, սովորաբար կատարվող երկբևեռ հակադրությունը, այն էլ հակադրման մեթոդն հակասականությամբ, է. Աղայանը փոխարինում է երեք եզրերի հակադրամիասնությամբ՝ քաջ գիտակցելով, որ միայն այդ կերպ է հնարավոր հասնել լեզվական իրողությունների ճշմարիտ արտացոլմանն ու ներկայացմանը:

Յնչույթը եռանդամ հակադրության մեջ դիտելու՝ է. Աղայանի փորձն առաջինը չէ: Ավելի վաղ առիթ ենք ունեցել ակնարկելու է. Աղայանի և Ն. Տրուբեցկոյի հնչույթաբանական ըմբռնումները որոշ առումով զուգադրելու հնարավորությունը⁷: Այժմ այդ մասին՝ փոքր-ինչ մանրամասն:

Ն. Տրուբեցկոյն առաջարկում է «հնչյունային կազմավորումների» բնութագրումն ու անվանումը կատարել երեք տեսանկյուններից. «Կարելի է ասել, որ **հնչույթը տվյալ հնչյունային կազմավորմանը հատուկ հնչույթաբանորեն էական հատկանիշների ամբողջությունն է...** Բոլոր՝ ինչպես հնչույթաբանորեն էական, այնպես էլ ոչ էական այն հատկանիշների ամբողջությունը, որոնք բացահայտվում են հնչյունային հոսքի այն կետում,

⁴ Նույն տեղում, էջ 237-238:

⁵ Նույն տեղում, էջ 239-240:

⁶ Նույն տեղում, էջ 247:

⁷ Տե՛ս **Ա. Ս. Աբրահամյան**, Յնչյունը որպես լեզվական միավոր // Բանբեր Երևանի համալսարանի, 1999, № 2, էջ 88:

որտեղ իրացվում է հնչույթը, մենք անվանում ենք *լեզվի հնչյուն* (և համապատասխանաբար *խոսքի հնչյուն*)»⁸: Այսպիսի թեկուզ չմանրամասնված, բայց բավականաչափ հստակ սահմանագատում առաջարկելուց հետո Ն. Տրուբեցկոյը զարմանալիորեն չի հետևում իր իսկ առաջարկությանը և հետագա շարադրանքում խոսում է երկու միավորի՝ հնչույթի և հնչյունի մասին: Ի պատիվ Է. Աղայանի՝ պետք է ասել, որ նա իր խորապես կշռադատված եռատումը հետևողականորեն պաշտպանում և օգտագործում է: Արդեն իսկ Է. Աղայանի բերած հանգամանալից փաստարկումները ցույց են տալիս, որ արվածը պատահական դիտարկում չէ, այլ որոշակի դիրքորոշման դրսևորում, որին հեղինակը սկզբունքային դեր ու արժեք է վերագրում և որին սկզբունքորեն հավատարիմ է մնում:

XX դարի երկրորդ կեսի լեզվաբանության մեջ բազմազան կարծիքներ են հայտնվել լեզվի մակարդակային կառուցվածքի վերաբերյալ: Այդ հարցի բոլոր քննարկումները, բնականաբար, սկսվում են մակարդակների գաղափարն առաջ քաշած Է. Բենվենիստի հանրահայտ հոդվածի⁹ վերլուծությունից: Այդպես է վարվում նաև Է. Աղայանը, որի տեսությունը մեծ չափով տարբերվում է Է. Բենվենիստի ներկայացրածից: Բավական է նկատել, որ Է. Բենվենիստի տարբերակած երեք մակարդակների (ենթամակարդակներով՝ առավելագույնը հինգ) դիմաց Է. Աղայանը տարբերակում է յոթը՝ 1. տարրության, որի միավորն է տարրույթը՝ հնչույթի տարբերակիչ հատկանիշը, 2. հնչության, որի միավորն է հնչույթը, 3. ձևության, որի միավորն է ձևույթը, 4. բառային, որի միավորն է բառը, 5. ձևաբանական, որի միավորն է բառածևը, 6. շարահյուսական, որի միավորն է շարահյուսույթը՝ նախադասության բաղադրիչը, 7. ստորոգային, որի միավորն է ասույթը¹⁰: Չնայած մակարդակներին Է. Բենվենիստի և Է. Աղայանի տված որոշ անվանումների զուգահեռությանը՝ երկու լեզվաբանների մեկնաբանությունները ցույց են տալիս, որ ըստ էության միայն տարրության մակարդակի ընդունումն է Է. Բենվենիստի ուղղակի ազդեցության արդյունք և հետևաբար իրոք գոյություն ունեցող ընդհանրություն. մյուս դեպքերում առկա են զգալի տարբերություններ:

Այս մակարդակների տարանջատման հարցում իր որոշակի դերն է խաղում հարաբերվող եզրերը հնարավորին չափ մանրամասն ներկայացնելու՝ Է. Աղայանի ձգտումը: Լեզվաբանը նշում է, որ եթե Է. Բենվենիստի բնութագրած մակարդակներն ընդհանրական են և այս կամ այն կերպ ներկայացված են բոլոր լեզուներում, ապա իր տարբերակածները ներառում են նաև այնպիսի մակարդակներ, որոնց մեջ որևէ լեզվում կարող են լինել համընկնումներ, ուստի դրանց տարրորոշված առկայությունը բոլոր լեզուների համար պարտադիր չէ¹¹. մնում է ավելացնել, որ Է. Աղայանի առանձնացրած կառուցվածքային մակարդակները գոյություն ունեն համարական լեզուներում:


⁸ Трубецкой Н. С. Основы фонологии. М., 2000, с. 43.

⁹ Տե՛ս Бенвенист Э. Уровни лингвистического анализа // Бенвенист Э. Общая лингвистика. М., 1974, էջ 129-140:

¹⁰ Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 37-43:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 44-45:

Լեզվի կառուցվածքային մակարդակների աղայանական ներկայացման մեջ չի պահպանվում մակարդակների միջև միայն հաջորդական ստորադասվածություն սահմանելու սկզբունքը, այլ հատուցվում է նրանով, որ ցույց են տրված այն բոլոր դեպքերը, երբ մի մակարդակի միավորը, առանց անմիջաբար հաջորդ մակարդակում բեկվելու, կարող է ուղղակիորեն մասնակցել ավելի բարձր մակարդակի միավորի կազմավորմանը. այս վերջին հանգամանքը թերևս ամենագնահատելին է Է. Աղայանի մակարդակային տեսության մեջ: Հնչույթի հատկանիշներից մինչև ասույթ կատարվող վերընթաց շարժումը Է. Աղայանը ներկայացնում է ստորև բերված գծապատկերով, որում ակնհայտորեն երևում են բոլոր հնարավոր անմիջական անցումները մակարդակների միջև.



Կարելի է տեսնել, որ երեք ստորին և երեք վերին մակարդակների միջև անցումները (գծապատկերում ներկայացված ինը անցումներից չորսը) միարժեք են, մյուս դեպքերում առկա է անմիջական և միջնորդավորված երկու կամ անգամ երեք անցումների զուգահեռություն: Դարձյալ

ակնհայտ է դառնում երկու եզրերի միագիծ հարաբերությամբ (ուրեմն և միագիծ հակադրությամբ) չսահմանափակվելու միտումը, որը դիտվում է Է. Աղայանի մաս այլ վերլուծություններում:

Հատուկ ուշադրության է արժանի լեզվի և խոսքի փոխհարաբերությանը Է. Աղայանի տված մեկնաբանությունը, որի հիմքում լեզվի՝ գործունեություն լինելու կամ առնվազն գործունեության մեջ դրսևորվելու գաղափարն է: Այս գաղափարը, որը սկիզբ է առնում Վ. Ֆոն Հունբրոլդտի լեզվափիլիսոփայության մեջ, ունեցել է իր հետևորդներն ու ընդդիմախոսները: Այս կապակցությամբ Վ. Ֆոն Հունբրոլդտի և Ֆ. դը Սոսյուրի առաջ քաշած դրույթների զուգադրումը ակնառու կերպով ի ցույց է դնում այդ երկու լեզվաբանների մոտեցումների տրամագծորեն հակադիր լինելը¹²: Է. Աղայանը նախապատվությունը միանշանակ տալիս է գործունեությունը լեզվի բնութագիր համարելուն: Ընդգծելով, որ երկատուն կատարելը բավարար չէ լեզվական իրողությունների համարժեք ներկայացման համար՝ նա նախ հաղորդակցման գործընթացը բաժանում է գործունեության՝ մեկը մյուսին շարունակող ու լրացնող երեք տեսակների՝ լեզվական գործունեություն, խոսքային գործունեություն և խոսողական գործունեություն: Առաջինը հասարակության հաղորդակցական գործունեությունն է՝ ամբողջությամբ վերցրած, այսինքն՝ բացառապես հասարակական գործունեություն. երկրորդը ներքին խոսք կազմելու հոգեբնախոսական գործունեությունն է, որը իր հիմքում եղած լեզվական համակարգով հասարակական է, իսկ որպես հոգեբնախոսական գործողությունների շղթա՝ անհատական. վերջինը լեզվական գործունեության իրացումն է՝ ներքին խոսքի օտարումը, որն անհատական է որպես հոգեբնախոսական գործունեություն, և հասարակական՝ որպես խոսքի օբյեկտիվացում¹³:

Բայց սրանով լեզվից խոսքին անցման նկարագրությունը չի վերջանում: Ինչպես նրբորեն նկատում է Դ. Գյուլզադյանը, Է. Աղայանի աշխատության այլ հատվածների հետ զուգադրումը ցույց է տալիս, որ այս եռանդամը որպես միջին օղակ ներառվում է մի ավելի ընդգրկուն եռանդամի մեջ՝ ձևավորելով լեզվի և խոսքի փոխհարաբերությունը ներկայացնող հնգանդամ շարք¹⁴: Այս եռանդամին մի կողմից՝ նախորդում է լեզվի ներուճակ համակարգը, մյուս կողմից՝ հաջորդում է խոսքը՝ որպես դրանց օտարված, օբյեկտիվացված արդյունք¹⁵: Այսպիսով՝ ստացվում են երկու եռանդամ շարքեր, որոնցից մեկն ասես ներդրված է մյուսի մեջ, նրա մի օղակի մանրամասն բնութագրումն ու ներքին տրոհումն է ներկայացնում.

¹² «Լեզուն ոչ թե գործունեության արդյունք (Ergon) է, այլ գործունեություն (Energeia)», - ասում է Հունբրոլդտը (В. фон Гумбольдт. Избранные труды по языкознанию. М., 1984, с. 70)՝ նպատակ ունենալով շաղկապել, միավորել լեզուն և խոսքը: «Լեզուն խոսողի գործառնություն չէ, այն պատրաստի արտադրանք է», - պնդում է Սոսյուրը (Ֆ. դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., 2008, էջ 29)՝ նպատակ ունենալով տարանջատել, հակադրել լեզուն և խոսքը:

¹³ Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 43:

¹⁴ Տե՛ս Դ. Գյուլզադյան, Ֆերդինանդ դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացի» հայերեն թարգմանության նշանակությունը մեր մտավոր իրականության համար, մաս I // <http://arteria.am/hy/1311521321>

¹⁵ Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 35-36, 113-117:

ԼԵԶՈՒ	ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ			ԽՈՍՔ
	Լեզվական գործունեություն	Խոսքային գործունեություն	Խոսողական գործունեություն	

Տեսնում ենք, որ այս դեպքում ևս է. Աղայանը հավատարիմ է մնում երկու եզրակետերը չհակադրելու, այլ, ընդհակառակը, միջանկյալ օղակների վերհանումով դրանց հակադրամիասնությունը ցույց տալու իր որդեգրած սկզբունքին: Հենց այդ սկզբունքն է այն ընդհանուրը, որով միավորվում են մեր դիտարկած միանգամայն տարբեր խնդիրներին է. Աղայանի տված լուծումները: Դիտարկված էին ընդամենը երեքը՝ որպես մուշներ, սակայն այդ շարքը կարելի է դեռ երկար շարունակել՝ ներառելով բազմաթիվ այլ լեզվաբանական հիմնախնդիրներ, ասենք՝ հարացուցային և շարակարգային հարաբերությունների, համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերի կապերն ու բաշխումը¹⁶ և այլն:

Հակադրումները չբացարձակացնելը, տարբերակվող եզրերի միջև գոյություն ունեցող անցումային օղակները կամ ոլորտները նկատելը ցանկացած գիտական ուսումնասիրության և մասնավորապես է. Աղայանի լեզվաբանական վերլուծությունների մեջ դիալեկտիկական մոտեցման վկայություններն են: Գիտական իմացության ճշմարիտ և հեռանկարային ուղի ապահովողը դիալեկտիկական սկզբունքն է, որի բազմաթիվ դրսևորումներ սփռված են է. Աղայանի աշխատությունների էջերում:

Բանալի բառեր – *կառուցվածքային լեզվաբանություն, լեզվի կառուցվածքային մակարդակներ, լեզվական միավոր, հնչույթ, հնչյուն, լեզու, խոսք, գործունեություն, հակադրություն, հակադրամիասնություն*

АШОТ АБРААМЯН – Вклад Эдуарда Агаяна в теоретическую лингвистику и её преподавание. – Работы Э. Агаяна по общему языкознанию занимают особое место в его обширном научном наследии. Они включают два взаимосвязанных аспекта – развитие теоретической лингвистики и её преподавание. Его учебник по основам языкознания, в окончательном виде изданный в 1987 г., до сих пор служит студентам всех языковых факультетов Армении. Что касается его общелингвистических взглядов, то в качестве ярких образцов в статье рассмотрено, как Э. Агаян толковал понятия фонемы и её отношение к звуку, а также уровневой организации языка, соотношение языка и речи. В анализе этих, равно как и других, проблем очевиден диалектический подход учёного, который проявился в отказе абсолютизировать противопоставления, в учёте единства противоположностей и в выявлении переходных ступеней между крайними точками. Диалектика была для Э. Агаяна методологическим принципом, гарантирующим истинное и перспективное развитие научного знания.

¹⁶ Այս կապակցությամբ տե՛ս Դ. Գյուլզադյանի հիշատակված հոդվածը, նաև այդ հոդվածի երկրորդ մասը (<http://arteria.am/hy/yev1312663973>):

Ключевые слова: *структурная лингвистика, уровни структуры языка, языковая единица, фонема, звук, язык, речь, деятельность, оппозиция, единство противоположностей*

ASHOT ABRAHAMYAN – *Edward Aghayan's Contribution to Theoretical Linguistics and Teaching It.* – When evaluating Edward Aghayan's contribution, two aspects are to be taken into consideration: his fifty-year teaching practice and his scientific studies, particularly his "Principles of Linguistics", which is one of the main textbooks used to teach general linguistics at philological faculties of all universities in Armenia. As it is impossible to cover Edward Aghayan's linguistic views in their entirety in a few pages, this paper is an attempt to reveal the principle of his approach to language. His interpretations of the concept of phoneme and its relation to sound, the problem of stratification of language, the interrelation between language and speech are observed here as striking examples of his approach to linguistic problems. The analysis of all these, as well as other problems reveals the dialectical approach of the author, expressed in his refusal to absolutize oppositions, taking into account their unity, revealing transitional stages between poles. These manifestations of dialectics as a methodological principle that guarantees the true scientific knowledge give special significance to Edward Aghayan's legacy in general linguistics.

Key words – *structural linguistics, levels of language structure, linguistic unit, phoneme, sound, language, speech, activity, opposition, unity of opposites*